


ՍՓԻՒՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ

Posted on December 23, 2018 by Keghart



Category: [Opinions](#)



բայց նաեւ՝ յայտագիրներու մշակման եւ զարգացումներու առումով: Հայկական սփիւռքը, ինչ խօսք, ունի իւրայատուկ դրուածք՝ մեկնելով պատմական այն իրողական վիճակէն, թէ մեծ համեմատութեամբ հետեւանք էր Ցեղասպանութեան եւ տեղահանումի: Ասիկա հայկական սփիւռքին կու տայ իւրայատուկ կարգավիճակ, բայց նաեւ՝ նոյնքան իւրայատուկ մարտահրաւեր:

Երրորդ հանրապետութենէն ետք Հայաստան-սփիւռք յարաբերութիւնները զգալի եւ շեշտակի կերպով զարգացան ու աճեցան: Հայաստան՝ որպէս անկախ պետականութիւն եւ երկիր, դարձաւ աշխարհասփիւռ հայութեան կիզակետը: Անցնող ակունքի քան քսանեօթը երկար տարիները եղան ուսանելի, բայց նաեւ՝ հայրենիք եւ սփիւռք զիրար հասկնալու, միասին գործելու, երկիրը շէնցնելու եւ զարգացնելու մեծ պատեհութիւն եւ ներդրում: Այսօր Հայաստան-սփիւռք կը գտնուինք այնպիսի կարգավիճակի մը մէջ, երբ զիրար շատ ակունքի լաւ հասկցած եւ իրարու հետ շատ ակունքի լաւ մէկտեղուած ենք: Այս զարգացումին մէջ սփիւռքի նախարարութիւնը եղաւ շատ կարեւոր կառոյց մը եւ աշխատանքային բնագաւառ, որ կամրջեց աշխարհով մէկ տարածուած հայութիւնը իր տարբեր շերտերով՝ Հայաստանի հետ եւ անպայմանօրէն՝ փոխադարձ յարաբերութեամբ: Ու տակաւին, ան հանդիսացաւ սփիւռքը ինք իրեն հետ եւ իրարու հետ միացնող կռուան:

Հոսկէ մեկնելով՝ կան շարունակականութեան գործընթացը եւ հարցադրումները, որոնք կը շրջագային ներկայ օրերուն: Պէ՞տք է շարունակել սփիւռքի նախարարութիւնը: Եթէ այո՛, ինչպէ՞ս եւ ի՞նչ տարողութեամբ: Եւ եթէ ոչ, բայց ինչո՞ւ:

Ներկայ օրերը ունին իրենց շատ մը մարտահրաւեր-հիմնահարցերը մէկ կողմէ սփիւռքահայ իրականութեան համար, բայց նաեւ՝ հայաստանեան իրավիճակէն մեկնելով եւ երեւի թաւշեայ յեղափոխութենէ ետք ակունքի մեծ ակնկալութիւններով: Եթէ հայկական սփիւռքը շատ «գունաւոր» է եւ տարբեր շերտերով, որուն վրայ պիտի ակնկալուի Հայաստանէն արտագաղթած հայորդիներ, որոնք սփիւռքեան իրականութեան վրայ ակնկալուցին նոր «երանգներ»: Ու հայկական այս մեծ «պարունակին» մէջ կայ այլ երեւոյթ մը, որ մինչեւ այսօր սփիւռքը տակաւին չէ վերածուած, այսպէս ըսած, կազմակերպչական-ընդհանրական կառոյցի մը, որ կրնար ծառայել որպէս համասփիւռքեան համադրողական օղակ: Բայց նաեւ առկայ է, եւ երեւի՝ ներկայ օրերուն մէջ շեշտուած ձեւով, Հայաստան երկրի եւ հայրենի պետականութեան ներշնչած ազգային-քաղաքական ինքնութիւնը՝ սփիւռքահայուն համար եւ ի մասնաւորի՝ երիտասարդ հայուն, որ հասակ կ'առնէ շատ մը գաղութներու մէջ, եւ ուր ան-անոնք կը գտնեն-վերագտնեն իրենց հայկական ակունքը եւ ինքնութեան գիտակցութիւնը՝ հայրենի հողին մէջ եւ անոր միջոցով: Կարկինը ակունքի լայն բանալով՝ այսօր շատ ակունքով օրակարգի վրայ է հայրենադարձութիւնը անցեալի ներգաղթի հիմքով, բայց՝ տարբեր տարողութիւններով, ընտրանքներով եւ միջոցառումներով:

Հայկական ընդհանրական այս իրավիճակներուն մէջէն է, որ պիտի տեսնենք անհրաժեշտութիւնը՝ շարունակելու սփիւռքի նախարարութիւնը եւ անոր աշխատանքային գործընթացը՝ գէթ աւելցնելով եւ կամ վերանորոգելով անոր աշխատանքային ռազմավարութիւնը: Եթէ մեր համահայկական եռանկիւնը կը կազմէ Հայաստան-Լեռնային Արցախ-սփիւռք, բայց անհրաժեշտ է, որ նոյն այս եռանկիւնը եւ անոր յարաբերութիւն-աշխատանքային գործընթացը ուժեղացնել: Ասոր մէջ, անկասկած, սփիւռքի նախարարութիւնը ունեցած է եւ պետք է շարունակէ պահել իր կարեւոր մասնակցութիւնը եւ ինքնուրոյն դրուածքը՝ հայրենի պետական վարչամեքենային մէջ:

«Հպարտ» Բանաստեղծը...

Դոկտ. Հրայր Ըսեպեճեան, Նիկոսիա, 28 Դեկտեմբեր 2018

«Ես բանաստեղծ չեմ, որպէսզի կարենամ գրախօսական մը գրել քու նոր հրատարակած երկու գիրքերուդ համար»:

Խաչիկ Տետեանին հետ ունիմ տարիներու վրայ երկարող բարեկամութիւն, որ անցած է անհատական բարեկամութենէ՝ հասնելով ընտանեկան ջերմ յարաբերութիւններու եւ հանդիպումներու: Իր երկու նոր հրատարակած բանաստեղծութիւններու հատորները՝ «Երազէն անդին», որոնք լոյս տեսած են Երեւան, ինծի եւ ընտանիքիս մակագրեց ու նուիրեց: Ինչ խօսք՝ մեծ ուրախութիւն եւ հպարտութիւն էր ինծի համար տեսնել իմ բանաստեղծ բարեկամիս նոր իրագործումը: Նկատի ունենալով, որ մեր հանդիպումներուն մէջ բացակայ չեն նաեւ կատակ-դիպուկները, չուշացաւ իմ խօսքը. «Ես բանաստեղծ չեմ... Գրախօսական չեմ կրնար գրել»: Չուշացաւ Խաչիկին արագ եւ նոյնքան կատակ-սրամիտ պատասխանը. «Գործէն փախչելու լաւ պատճառաբանութիւն»:



Ճիշդ էր Խաչիկ Տետեանը: Ես պետք էր յիշէի, որ աշակերտական տարիներուս որքան հայ բանաստեղծներու քերթուածները գոց կը սորվէի եւ ատենամարզանքի պահերուն կը մասնակցէի մրցոյթներու: Հայ բանաստեղծութիւնը միշտ ալ ինծի հետ «քալած» է տարիներու ընթացքին:

Խաչիկին հետ մեր զրոյցներուն մէջ նաեւ անպակաս չեն ազգային-հայրենական ու եկեղեցական-միութենական եւ գաղութային հարցերը, որոնց մէջէն անպայմանօրէն դուրս պիտի ելլէին հոգեներաշխարհային մտահոգութիւններ եւ տագնապներ, որոնցմէ մէկը՝ «Ես յոռետես անձ եմ», որ քանիցս ըսած է Խաչիկ:

Իր երկու նոր հրատարակած բանաստեղծութիւններու հատորները կարդալով՝

ըմբռնչիւնեցի իմ բանաստեղծ բարեկամիս մէկ կողմէ «ներաշխարհ»-ը, միւս կողմէ ալ՝ այն բոլոր «յոռետես» վիճակները, որոնք կը տաճնապեցնեն զինք... Ճիշդ է, որ այս «յոռետեսական» հարցերը երբեմն կը քննարկենք իրարու հետ, բայց տարբեր զգացի, երբ կարդացի զանոնք իր բանաստեղծութիւններուն մէջ: Հոն տեսայ իմ բանաստեղծ բարեկամս իր «ամբողջութեան» մէջ:

Փրոֆ. Երուանդ Տէր Խաչատուրեանը, որ հայրենի ու հայկական ընդհանրական իրականութեան մէջ ունի իր արժանի դիրքը եւ վաստակը՝ որպէս մտաւորական-գրող եւ արուեստաբան, խմբագրած եւ կազմած է Խաչիկին հատորները: Ան յառաջաբանին մէջ կ'ըսէ. « Խաչիկ Տէտեանը բազմաթեմա բանաստեղծ է եւ՝ անսովոր բազմաթեմա»:

Այս «անսովոր բազմաթեմա»-ն էր, որ ապրեցայ եւ ընկալեցի Խաչիկին երկու հատոր նոր քերթուածներու հաւաքածոյին մէջ: Տեսայ նաեւ, թէ ինչպէ՛ս Խաչիկ Տէտեանը «յոռետես» անձ-բանաստեղծն է: Բայց իրարու հետ շաղկապուած իր բոլոր բանաստեղծութիւններուն մէջ տեսայ «յոռետեսութիւն»-ը, որ սակայն կեցած ու անշարժ չէր, այլ՝ քալող, եւ ինչպէս Երուանդ Տէր Խաչատուրեանը որակած էր, «շարունակուող» բանաստեղծ-բանաստեղծութիւնն մըն է: Ան միշտ ամուր կանգնած է, բայց նաեւ պայքարած ու պոռթկացած է, եւ Երուանդ Տէր Խաչատուրեանին նկարագրականով՝ «սփիւռքահայ հոգեբանական եւ հոգեկան ներկայ վիճակներու, որոնք այլ են»՝ իմա հեռու մարդկային-ազգային արժեքի խորքային գիտակցութենէ: Խաչիկ Տէտեանը իր յոռետեսութիւնը զարգացուցած է, իմա՝ «շարունակած», որպէսզի ինք հասնի, բայց նաեւ հասցնէ հայր, ազգը, հայրենիքն ու, տակաւին, մարդկութիւնը այս արժեքի գիտակցութեան:

Բանաստեղծութիւններու այս երկու հատորներուն մէջէն սկսայ քակել մէկ-մէկ «բազմաթեմա» սիւթերը եւ տեսնել, թէ ինչպէ՛ս Խաչիկը իւրաքանչիւր յոռետեսական տաճնապները շարունակած է հասցնել արժեքի կեանքին, որ պետք է շարունակուի:

Իսկ Խաչիկ Տէտեանի աշխարհը մարդն է իր «սիրոյն» մէջ, «վիշտին», «բնութեան», «մահուան», «անորոշութեան», «կեանքին», «պարզութեան» ու այս բոլորը՝ իր «հոգիի թռիչքին» մէջ ու մէջէն: Մարդուն մասին է, որ կը խօսի եւ կը յայտնէ, թէ «ո՛ր կ'երթայ...» եւ «կը խարխափէ անյոյս ճակատագրով մը»: Տակաւին, ան «կ'որոնէ իմաստը այս բոլոր անդու վազքին» եւ կը տեսնէ աշխարհ մը՝ «կ'երպարանափոխուած եւ անիծուած»: Այս բոլորին մէջէն ան կ'ուզէ կորսուիլ. «Կորսուիլ կ'ուզեմ հորիզոնի անհունին մէջ»: Բայց այս «անյոյս ճակատագրին» ան կու տայ ընթացք, եւ իր «կորսուելու փափաք»-ն ալ կը դառնայ նպատակասլաց: Ան կը փնտռէ «նոր հաւատք ու երազ ներշնչող» իրականութիւնները՝ թափ տալով իր հոգիի թռիչքին: «Պիտի ուզէի որոտալ, ժայթքիլ, դուրս գալ նոր երազի մը ուղիով»: Եւ այս նոր երազին մէջ պետք է տեսնել յոռետես բանաստեղծին շարունակուող սլացքը՝ հասնելու եւ ձգտելու համար արժեքին «ճշմարտութեանը», որ «աղջամուղջին մէջ կորսուած» է: «Ճշմարտութիւնը» բանաստեղծը կը գտնէ հաւատքին մէջ: «Տո՛ւր ինձի իմաստութիւն, տէ՛ր»: Այս այն

«Իմաստութիւնն» է, որ «խաւար իր կեանքին համար դառնայ ջահը անմար»: Ան կ'ուզէ քալել այս «ջահին» ուղղութեամբ, որպէսզի կարենայ ըմբռնել Տիրոջ «խորհուրդները խորհրդաւոր»:

Խաչիկ Տէտէեանը հայն է, սփիւռքահայը եւ Հայաստան հայրենիքը սիրող, բայց եւ որուն «ապագան զինք կը յուզէ»: Ան կը տեսնէ իր ժողովուրդին «նահանջը՝ կամաւոր եւ այլասերող»: Ան այս իրականութիւնը վերածած է «վիշտի»: «Իմ ցեղի կորուստն է դանդաղ... կ'երթանք կորստեան ուղիներէ... Կը զոհաբերուին սրբութիւններ, արժէքներ, հայրենիք, ազգ, լեզու, անցեալ, կը նուազի յոյսը. կ'աղաւաղուի դիմագիծը՝ մարդուն սրբակենցաղ, որ տեսակ է հազուագիտ: Ո՞ր է ան՝ այդ տեսակը կորսուած»: Ան այս բոլորը կ'որակէ որպէս՝ «Տագնապն է ան հայուն ներկային, հայրենիքէն դուրս նահանջող հայուն»:

Ան կ'ակնարկէ հայուն մեծ երազի ճամբու իտեալին եւ տեսիլներուն, որոնք՝ «զիջեցանք զանոնք տեղայնական մտայնութեամբ»: Խաչիկ Տէտէեանին համար «հայութիւն, հայրենիք ամէն բանէ վեր» են: Իր յոռետեսութիւնը այն է, որ հայը միաբան չէ: Ան կը ձգտի միաբանութեան: Հոս դարձեալ ակնյայտ է շարժող յոռետեսութիւնը, եւ ան կ'ըսէ. «Մէկը ամբողջին ու ամբողջը մէկին կարգախօսով, հաւաքական գործին հաւատացած»: Խաչիկը իր հայրենասիրութեան թռիչք-սլացքը կը հասցնէ «ուրիշ» մը ըլլալու գիտակցութեան. «Ահա այն ատեն միայն հաւատացի, որ մերն իրաւամբ ուրիշ է... որ Հայաստան աշխարհ կոչուած այս դրախտը իրաւամբ հրաշք մըն է հողեղէն...»: Բայց Խաչիկին սլացքը տակաւին վեր է. «Պիտի հասկնանք ուշ կամ կանուխ, անպայման, թէ հայրենիքն է միայն փրկութեան լաստը վերջին»: Ան կը վստահեցնէ՝ մեկնելով իր սփիւռքահայուն փորձէն, որ՝ «օտար ամայի ճամբէքի վրայ չկայ խաղաղութիւն»:

Խաչիկ Տէտէեանը պահանջատէր բանաստեղծ է իր ժողովուրդի ահաւոր Տեղասպանութեան փորձառութեան մէջ. «Սպաննեցիր մարմինը, բայց չբեկանեցիր անոր կամքը: Լսէ՛, հայր կը բախէ դուռդ հիմա՝ ուժգնօրէն, արեան մուրհակները ձեռքին, արդար վրէժխնդրութեամբ. յարութեան դողանջները կը հնչեն ծագէ ծագ, յարութեան շունչով զօրացած»:

Խաչիկ Տէտէեանը կը հաւատայ եւ ամուր կառչած է մայրենիին. «Հայուն դժուար երթին դուն աղաղակող օրագրութիւն»: Բոլոր «փոթորկոտ ու փոխուող» օրերուն մէջէն ան կը հաստատէ չփոխուող իրականութիւնը, որ՝ «Կը մնան փորագրուած երեսունվեց տառեր հրաշագործ՝ որպէս անջնջելի, նուիրական սխրանք իւրայատուկ»:

Կայ նաեւ Խաչիկ Տէտէեան «Տեսիլքի» բանաստեղծը: Հոս դարձեալ իր յոռետեսութիւնը կը շարժի... «Կը տեսնեմ երկիր ազատ ու արդար, պետութիւն, ժողովուրդ ձեռք-ձեռքի տուած, կը կերտեն նոր, ազատ հայրենիք, նոր սխրանք, ուժեղ ապագայ»:

Խաչիկ Տէտէեանը կը հաւատայ նաեւ իր ծննդավայր Լիբանանին. «Զէ՞ որ իմ հայրենիքն է նաեւ ան, այդ որդեգիր ծնողքս հարազատ»: Բայց նաեւ կ'ափսոսայ Լիբանանին

վիճակուած սեւ ճակատագրին, որ ան ապրած է ամէն հարագատութեամբ. «Մնացիր եւ միայնակ ճակատագրին դեմ...»: Ան կը գիտակցի մեծերուն բոլոր խաղերուն. «Կ'օգտագործեն քեզ մեծերը այս աշխարհի»: Խաչիկ Տետեանը կը տեսնէ, թէ ինչպէ՛ս «Երկիրն այս, Նահանջի ու կորստեան ուղին է բռնած», եւ այդ պատերազմի արհաւիրքին մէջ ան կը գծէ՝ «ատելութեան դիմագիծը», «նախանձը անհանդուրժող», «անարգ ոճիր»-ը եւ այդ բոլորը կը սեղմէ իր մէջ՝ որպէս «քառս իմ Ներսիդիս»:

Բայց Խաչիկ Տետեան յոռետեսը կրնայ տեսնել «նոր Լիբանան»: Լիբանանը, «որ կը ցցէ գլուխը յաղթական՝ մահաքունէն զարթնած»:

Խաչիկ Տետեանին յոռետեսութիւնը իրաւամբ շարժող է, որովհետեւ ան գիտէ դեմ կենալ ներկայ օրերու ընթացքին, որ «այլ» է: Բայց ինք հոն չէ, քանի գիտէ դիպարել «անտարբերութեան» մէջէն, որ «ախտ» է եւ «կը սուրայ մոլագար»: Խաչիկ Տետեանը «անցեալի տխուր յուշերը վանած» է ու, տակաւին, «ամօթի ու պարտութեան բարդոյթէն ձերբազատած», ան կը Նայի «վաղուան օրուան յաղթութեան՝ հպարտութեամբ գօտեպնդուած»:

Այս յաղթութեան հպարտութիւնն է, որ Խաչիկ Տետեանը դարձուցած է «հպարտ» բանաստեղծ... Հպարտը երբեք գերակայութեան համար չէ: Ինչպէս որ ինք կ'ըսէ՝ «Աժան ու սին ինքնապարծութեամբ»: Այլ հպարտութիւն մըն է, որ Խաչիկ Տետեան յոռետես բանաստեղծը վերածած է շարժող եւ շարժուն: Շարժուն՝ կեանքի մէջ արժէքին տենչալով եւ հասնելու ձգտումով: Ահա թէ ինչո՛ւ իր բանաստեղծութիւնը «շարունակուող» է, քանի արժէքի կեանքի ձգտումը երբեք պէտք չէ կենայ:

Իսկ արժէ՞քը... Ան հպարտ է՝ «հայ ծնած ըլլալով», հպարտ է՝ «հայու արիւն կրելով»: Այս հպարտութիւնը իր մէջ կերտած է «հաւատք» մը, որ միշտ «վառ» է, կենդանի, ապրող եւ շարժող: Տակաւին, կեանքի նկատմամբ «համոզմունքով» մը, որ իր անձը եւ ապրած օրերը վերածած են «ջերմութեան»: Այս «համոզմունքը» եւ «ջերմութիւնը» Խաչիկ Տետեան, հպարտ բանաստեղծը եւ մեզ բոլորս կը տանին յոռետեսութենէն դէպի արժէքի կեանքը տեսնելու եւ կերտելու մարտահրաւերին:

Շնորհակալութի՛ւն, Խաչիկ Տետեան, այս արժէքին ու ինքնութեան գիտակցութեան համար: Քեզի, մեզի եւ մեր բոլորին:

Խաչիկ Տետեան՝ հպարտ բանաստեղծը, որ կը խթանէ մեզ բոլորս, որ մենք հպարտ հայեր ենք...

Հպարտ բանաստեղծը: Ան, որ յոռետես իրավիճակները կը շարժէ հասնելու եւ հասցնելու համար մեզ բոլորս արժէքի գիտակցութեան:

